Երիտասարդ Պատմագետների Ասոցիացիա ՀԿ

Edu Armenia նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2022

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Սովորողների քննադատական մտածողության զարգացումը մայրենիի ուսուցման գործընթացում

Հետազոտող ուսուցիչ՝ Նունե Խորենյան
««Հակոբ Կոջոյան»» կրթահամալիր

Բովանդակություն

1. Ներածություն
2. Քննադատական մտածողության զարգացումը ԽԻԿ համակարգի կիրառման միջոցով: Համակարգի հիմնավորում
3. Քննադատական մտածողության զարգացումն ինքնուրույն ընթերցանության դասաժամերին
4. Դասի նմուշօրինակ
5. Քննադատական մտածողության զարգացումը գրավոր աշխատանքների միջոցով
6. Եզրակացություն
7. Օգտագործված գրականության ցանկ

1. Ներածություն

Աշխարհի ավելի ու ավելի բազմամարդ դառնալուն ու ժողովրդավարության ավելի ու ավելի տարածվելուն զուգընթաց ակնհայտ է դառնում, որ երիտասարդներց ավելի քան երբևէ պահանջվում է բարդ խնդիրներ լուծելու, հանգամանքները քննախույզ դիտարկելու, այլընտրանքային կարծիքները քննելու և լրջամիտ ու իրազեկ որոշումներ կայացնելու կարողություն: Ակնհայտ է նաև, որ քննադատաբար մտածելը հմտություն է, որ կարող է ձևավորվել և զարգանալ ուսումնական բարենպաստ միջավայրում: Քննադատական մտածողությունն իրենից ներկայացնում է հասկացությունները և ինֆորմացիան վերամիմաստավորելու և ձևափոխելու բարդ գործընթաց, որը կատարվում է գաղափարներն ու միջոցները ստեղծագործաբար համադրելու միջոցով: Դա ակտիվ և ինտերակտիվ ճանաչողական գործընթաց է, որ սկիզբ է առնում միանգամից և մի քանի մակարդակներում:

Կրթության բնագավառի մասնագետները երկար են բանավիճել այն մասին, թե ինչն է առավել կարևոր՝ փաստերի իմացությունը, թե գործնական և հայեցակարգային գիտելիքները:

Նրանք, ովքեր պնդում են փաստային գիտելիքների առավել կարևորությունը, սովորաբար համոզված են այն բանում, որ գոյություն ունի փաստերի որոշակի համախումբ, որոնց պատշաճ իմացությունը կարող է աշակերտին նախապատրաստել որպես հասարակական համակարգի լիարժեք անդամի: Մյուսները պնդում են, որ հայեցակարգային գիտելիքները և կիրառական փորձառությունն առավել

կարևոր է, այսինքն, գտնում են, որ մերկ փաստերի իմացությունը բոլորովին բավարար չէ նշված նպատակին հասնելու համար: Հակառակը՝ նրանք պնդում են, որ գիտելիքը ինքնին որևէ արժեք է ձեռք բերում միայն այն դեպքում, եթե այն կիրառելի է, եթե այն ընկալվում է հիմնավորապես, և եթե այն կարող է գործնականորեն, ստեղծագործաբար և քննադատաբար օգտագործվել:

Ոչ ոք կասկածի տակ չի առնում փաստերի իմացության կարևորությունը: Թեկուզ ամենօրյա, առևտրային գործերը հոգալու համար, մարդ պետք է հսկայական ծավալի գիտելիքներ ունենա: Այդուհանդերձ, պնդումը, որ գոյություն ունի գիտելիքների որոշակի քանակ, որը տալով աշակերտներին՝ կարելի է նրան նախապատրաստել ապագայի համար, ավելի ու ավելի քիչ հիմնավորված է թվում մեր արագորեն փոխակերպվող աշխարհում: Խիստ դժվար է նշել, թե գիտելիքների ինչ որոշակի ծավալ է անհրաժեշտ, եթե հաշվի առնենք, որ այսօր առկա իմացության 100 %- ը կազմելու է 25 տարի հետո առկա իմացության միայն 10-15%-ը:

Ավելին, այս արագորեն ընդարձակվող իմացական դաշտը հիմա մատչելի է բոլորին:

Փոփոխվող աշխարհում հաջողակ լինելու համար այսօրվա աշակերտներից կպահանջվի ինֆորմացիան տեսակավորելու, դրա կարևորությունը և անկարևորությունը որոշելու հմտություն: Նրանք պետք է կարողանան կողմնորոշվել, թե զանազան տեղեկություններն ինչպես են առնչվում միմյանց հետ:

Գիտելիքը արժեքավոր է, երբ այն կիրառելի է և ընկալված է հիմնավորապես:

Ապագան պատկանում է նրանց, ովքեր կկարողանան ինֆորմացիան քննադատաբար վերլուծել և կերտել սեփական ճշմարտությունը: Սովորողներին պետք կլինի նոր գաղափարը համատեքստում տեղադրելու, անծանոթ հասկացության իմաստը գտնելու և չառնչվող կամ ոչ ճիշտ տեղեկությունը մերժելու կարողություն: Աշակերտները պետք է կարողանան քննադատական, ստեղծագործական և արդյունավետ ձևերով իմաստավորել ինֆորմացիայի օվկիանոսում իրենց բաժին հասած հատվածը:

Քննադատական մտածողության մասին շատ է գրվել: Քննադատաբար մտածողների համար ինֆորմացիայի հիմնական ընկալումն ավելի շուտ ուսումնական գործընթացի սկիզբն է, քան վերջնակետը: Քննադատաբար մտածելը ենթադրում է ընկալել գաղափարները և ապա՝ սկսել խորհել դրանց պարունակած նշանակության մասին, դիտել դրանք մի փոքր թերահավատությամբ, հավասարակշռելու համար դրանք դիտարկելով հակադիր տեսանկյուններից, հիմնավորումները ամրապնդելու համար կառուցել դրույթների համակարգ, և այդ կառույցների վրա հենվելով՝ գալ որոշակի դիրքորոշման:

Քննադատական մտածողությունը ներառում է մտավոր բարդ գործընթաց, որը սկսվում է ինֆորմացիայով և ավարտվում է որոշման կայացմամբ:

Քննադատական մտածողությունը կարևորագույն հմտություն է բաց, ժողովրդավարական հասարակությունում:

Քննադատական մտածողությունը բարդեցված մտածելակերպ է: Որպես այդպիսին, այն հաճախ ընկալվում է որպես միայն ավագ աշակերտների կարողություններին համապատասխանող զբաղմունք:

Սակայն, նման պատկերացումը սխալական է: Քննադատական մտածողությունը հնարավոր է բոլոր տարիքներում: Այս աշխատանքում իմ առջև խնդիր եմ դրել ապացուցել, որ քննադատական մտածողությունը հնարավոր է զարգացնել նաև կրտսեր դպրոցականների մոտ:

2. Քննադատական մտածողության զարգացումը ԽԻԿ համակարգի կիրառման միջոցով: Համակարգի հիմնավորում

Ինֆորմացիայի արդյունավետ տնօրինումը ենթադրում է, որ աշակերտները պետք է կարողանան վարժ կիրառել մտածողական պրակտիկ հմտությունների որոշակի համալիր, կարողանան ինֆորմացիայում տեղ գտած գաղափարներն արդյունավետ կերպով տարանջատել միմյանցից, և ապա կարողանան դրանք կերպափոխել սեփական վարքային դրսևորումներին: Նրանք պետք է դառնան քննադատաբար մտածող և սովորող մարդիկ: Սակայն աշակերտները չեն կարող մեխանիկորեն դառնալ քննադատաբար մտածող մարդիկ: Նրանք պետք է ձեռք բերեն բանավիճելու, վերլուծելու, ինֆորմացիայի և գաղափարների իրենց անձնական օգտակար դաշտ ստեղծելու փորձառություն: Նրանք պետք է կարողանան անցնել քննադատական վերլուծության և քննադատական կշռադատման համակարգված գործընթացով, որը նրանց կօգնի ոչ միայն դպրոցում եղած ժամանակ կողմնորոշվել ինֆորմացիայի հարցում, այլև ապագայում կզինի անկախ ու քննադատական մտածողության և կշռադատման կուռ համակարգով:

Խթանման փուլի հիմնավորում

Խթանել, հետաքրքրել, ոգևորել, առաջ մղել, ներշնչել աշակերտներին՝ վերհիշել իրենց իմացածը:

Այս փուլում կատարվում են մի շարք իմացական վարժություններ: Նախ՝ աշակերտներն ակտիվորեն փորձում են վերհիշել թեմայի մասին ունեցած իրենց գիտելիքները, ամբողջ ինֆորմացիան: Սա սովորողներին ստիպում է քննության ենթարկել սեփական գիտելիքները և միևնույն ժամանակ սկսել խորհել բուն թեմայի մասին, որը շուտով պետք է մանրամասնորեն ուսումնասիրեն: Այս գործընթացը կարևոր է նրանով, որ սրա միջոցով հնարավոր է լինում հստակ սահմանել գիտելիքը, որն արդեն ունես, և նորը հնին առնչելու հիմք ստեղծել: Սա շատ կարևոր է, որովհետև գիտելիքը մնայուն լինելու համար պետք է ընկալվի արդեն յուրացված և հասկացված իմացական համատեքստում: Համատեքստից դուրս ինֆորմացիան կամ ինֆորմացիան, որ սովորողները չեն կարող կապել իրենց իմացածին, կարող է շատ շուտով կորսվել:

Ուսումնառությունն, ըստ էության, նորը իմացած հնին առնչելու գործընթաց է: Սովորողը կարող է նոր գաղափարներ կառուցել՝ հենվելով առկա գիտելիքի և պատկերացումների վրա: Այսպիսով, աշակերտին օգնելով վերակառուցել և հստակեցնել ունեցած գիտելիքները և պատկերացումները, մենք օգնում ենք նրան լայն ու կայուն հիմք պատրաստել նոր ինֆորմացիան ընդունելու և հիմնավորապես յուրացնելու համար: Դա նաև օգնում է երևան հանել սխալ պատկերացումները, խառնաշփոթը, թերի գիտելիքները, բաներ, որ առանց նման քննության դժվար կլիներ ի հայտ բերել:

Խթանման փուլի II նպատակը աշակերտին շահագրգռելն ու ակտիվացնելն է: Սովորելը պետք է ակտիվ գործընթաց լինի: Շատ հաճախ է պատահում, երբ երեխաները պասիվ վիճակում նստում են դասարանում ու լսում ուսուցչին, որը նրանց փոխարեն անում է ամբողջ

մտավոր աշխատանքը, մինչ իրենք առանց մտածելու նշումներ են անում:

Իմաստալից, հիմնավոր, քննադատաբար ընկալման համար անհրաժեշտ է դասարանում ամենաակտիվ դերը վերապահել աշակերտներին: Ակտիվ ներգրավումը ենթադրում է, որ աշակերտները պետք է դասի ընթացքում սեփական մտքերը ձևավորելով ակտիվ մտածեն և գիտակցեն, որ իրենք մտածում են: Այս ձևով անձնական գիտելիքները պահվում են գիտակցության մակարդակի վրա, գաղափարի կամ թեմայի մասին աշակերտի կառուցած պատկերն անթաքույց երևում է: Իմացական կառույցը երևակայելը դյուրացնում է նոր ինֆորմացիայի յուրացումը, որովհետև դրա համար անհրաժեշտ համատեքստը ակտիվացված է և պատրաստ է նորն ընդունելուն:

Եվ քանի որ կայուն ընկալումը նոր ինֆորմացիան հին իմացական կառույցներին կապելու գործընթաց է, խթանման III նպատակը հատկապես է կարևորվում: Այս փուլի միջոցով հաստատվում է թեման հետազոտելու նկատմամբ հետաքրքրությունը, և կայուն պահպանվում է ավելին իմանալու շահագրգռվածությունը: Շահագրգռվածությունն ու կոնկրետ նպատակը էապես կարևոր են, եթե ցանկանում ենք մշտապես ունենալ գործընթացի ակտիվ մասնակից: Շատ ավելի արդյունավետ է մի բան սովորել որոշակի նպատակ ունենալով, քան ինքնանպատակ: Գոյություն ունի նպատակների 2 տեսակ՝ ուսուցչի սահմանած կամ տեքստից բխող նպատակ և ինքնություն սահմանած՝ սեփական նպատակ: Այս վերջին նպատակը շահագրգռության շատ ավելի հզոր միջոց է, քան դրսի ազդակներով պարտադրված նպատակը, քանի որ հաճախ մարդու շահագրգռվածությունը կախված է մարդու նպատակից: Առանց կայուն հոտաքրքրվածության դժվար է պահպանել իմացական

կառույցները վերակառուցելու կամ նոր ինֆորմացիան յուրացնելու շահագրգռվածությունը:

Հիմնավոր ուսումնառության համար խիստ կարևոր է սովորելու նպատակ սահմանելը:

Իմաստի ընկալում (փուլի հիմնավորում)

Այս փուլում սովորողը հաղորդակցվում է նոր ինֆորմացիայի կամ նոր գաղափարի հետ: Այս հաղորդակցությունը կարող է կատարվել տեքստ կարդալու, կինոնկար դիտելու, բանավոր խոսք լսելու միջոցով:

Այս փուլի ժամանակ է, որ աշակերտը պետք է ինքնուրույն կարողանա պահպանել հետաքրքրվածությունը: Սովորական երևույթ է, երբ մի ամբողջ էջ կարդալուց և այն շրջելուց հետո ոչինչ հնարավոր չի լինում հիշել կարդացածից: Սա առանց հասկանալու կարդալու, առանց ճանաչողական ակտիվ ջանքի կարդալու և, վերջապես, առանց ընկալումը վերահսկելու կարդալու ցայտուն օրինակ է: Իմաստի ընկալման փուլը ուսումնառության համար խիստ կարևոր նշանակություն ունի, սակայն սովորելու հնարավորությունները կարող են կողքով անցնել, եթե աշակերտը բավականաչափ ակտիվորեն ներգրավված չէ բուն գործընթացի մեջ:

Իմաստի ընկալման փուլի ընթացքում, ամենակարևորը ներգրավման աստիճանը, հետաքրքրությունը, եռանդը պահպանել կարողանալն է, որ ձեռք է բերվել խթանման ընթացքում: II կարևոր խնդիրը սովորողին օգնելն է վերահսկել սեփական ընկալումը, հատկապես, երբ նոր ինֆորմացիայի է հանդիպում: Նոր ինֆորմացիայի հայտնվելու դեպքում, արդյունավետ սովորողները և արդյունավետ ընթերցողները վերահսկում են իրենց ընկալումը: Երբ աշակերտները վերահսկում են իրենց ընկալումը, նրանք, ըստ էության, ինֆորմացիան փորձում են հարմարեցնել իրենց մտքում արդեն իսկ հաստատված

իմացական կառույցներին: Նրանք նպատակայնորեն նոր գիտելիքն առնչում են իրենց իմացածին:

Կշռադատման փուլի հիմնավորում

Այս փուլը, ցավոք, հաճախ է անտեսվում, չնայած այն ոչ պակաս կարևոր է: Կշռադատման փուլի ընթացքում է, որ սովորողը հանրագումարի է բերում նոր գիտելիքը, և նոր հասկացությունները հարմարեցնում է իր ձևավորված իմացական կառույցին: Այս փուլում է, որ աշակերտը իսկապես յուրացնում է՝ սեփականացնում է նոր գիտելիքը: Այստեղ է, որ ձեռք է բերվում մնայուն, երկարաժամկետ իմացություն: Իմացության ձեռքբերումը ենթադրում է փոփոխություն, ինչ-որ բանով նախկինից տարբեր վիճակ: Անկախ այն բանից, թե փոփոխությունն ինչին է վերաբերվում՝ նոր ընկալումներին, վարքային նոր դրսևորումներին, թե նոր պատկերացումներին, մնանույնն է, հենց այդպիսի իրական և մնայուն փոփոխություններով է, որ բնորոշվում է սովորել ասածը: Եվ այս փոփոխությունը տեղի է ունենում, երբ սովորող անհատը վերակառուցում է իր իմացական կառույցները, նորը այնտեղ հիմնավորապես տեղավորելու համար:

Սովորողը նոր գաղափարը լիովին յուրացնում է, երբ այն արտահայտում է սեփական բառերով:

Գոյություն ունեն մի քանի էապես կարևոր առաջադրանքներ, որ նպատակաուղղված են հատկապես կշռադատման փուլին: Դրանցից կարևորագույնը այն է, որ աշակերտները սեփական բառերով արտահայտում են դասի ընթացքում հանդիպած նոր ինֆորմացիան և նոր հասկացությունները: Սա կարևոր է իմացական նոր կառույցի ձևավորման առումով: Գիտելիքի հիմնավոր յուրացումն ու խորը ընկալումն անհատական երևույթ է: Ընկալումը խորն ու մնայուն է, երբ այն տեղեկացվում է իմաստալից համատեքստային կառուցվածքում:

Ընկալածը սեփական բառերով ձևակերպելու ջանքերով է, որ ստեղծվում է անձնական իմաստալից համատեքստ:

Այս փուլի 2 նպատակը աշակերտների միջև եռանդուն քննարկում ծավալելն է, որն անկասկած մեծապես նպաստում է արտահայտչամիջոցների ընդլայմանը, և երեխաներին հնարավորություն է ընձեռում հաղորդակցվել միմյանց, բազմապիսի իմացական կառուցվածքներին ու խորհել դրանց մասին՝ սեփականը կառուցելու ընթացքում:

Կշռադատման փուլում քննարկման մեջ ներգրավվելով, աշակերտները իսկապես բազմազան իմացական կառուցվածքների հետ են ծանոթանում, որոնք հաճախ, խորհելու տեղիք են տալիս: Սա ուսումնական գործընթացում փոփոխությունների և վերահայեցակարգման պահն է: Նոր ինֆորմացիան հնին ինտեգրելու ձևերի բազմազանությունն օգնում է ձևավորել առավել շարժունակ իմացական կառույցներ, որոնք ապագայում կարող են շատ ավելի ճկուն և պրակտիկ կիրառություն գտնել:

ԽԻԿ համակարգով դասավանդումը ուսուցչին տալիս է մի համատեքստ, որի առկայությամբ հնարավոր է՝

- ակտիվացնել աշակերտների մտածողությունը
- սահմանել նորը սովորելու նպատակները
- հետաքրքիր քննարկումներ ծավալել
- աշակերտներին ակտիվորեն ներգրավել ուսման գործընթացի մեջ
- նպաստել փոփոխություններին
- խթանել կշռադատված մտածողությունը
- աշակերտներին հնարվորություն տալ ծանոթանալ տարբեր կարծիքների

- օգնել աշակերտներին՝ ձևակերպել և առաջադրել ինքնուրուն հարցեր
- խրախուսել ինքնարտահայտումը
- ապահովել ինֆորմացիայի մշակում
- նպաստել քննադատական մտածողությանը

Մթնոլորտը, որտեղ խրախուսվում է կարծիքների բազմազանությունը, նպաստում է քննադատական և ճկուն մտածողության զարգացմանը:

Եթե քեզ պետք է հիշել՝ կմոռանաս: Եթե քեզ պետք է հասկանալ՝ կհիշես:

3. Քննադատական մտածողության զարգացումն ինքնուրույն ընթերցանության դասաժամերին

Քննադատական մտածողությունն իրենից ներկայացնում է տեղեկատվությունը վերամիմաստավորելու և ձևավորելու բարդ գործընթաց, որը կատարվում է գաղափարներն ու միջոցները ստեղծագործաբար համադրելու միջոցով: Դրա կիրառումը հնարավոր է բոլոր տարիքներում: Երբեմն կարծիք է հնչում, որ միայն ավագ դպրոցի աշակերտները կարող են ներգրավվել այդ գործընթացում: Սա բավականին սխալ պատկերացում է: Կրտսեր դպրոցի երեխաները ևս պատրաստակամորեն են մասնակցում բարդ խնդիրների լուծում պահանջող առաջադրանքների կատարմանը և ընդունակ են դրսևորել որոշումներ կայացնելու կարողության բարդ մակարդակ: Չէ՞ որ գիտելիքն արժեքավոր է, երբ այն կիրառելի է և ընկալված է հիմնավորապես: Ապագան պատկանում է նրանց, ովքեր կկարողանան

տեղեկատվությունը քննադատաբար վերլուծել և կերտել սեփական ճշմարտությունը:

Քննադատական մտածողությունը ինքնուրույն մտածողություն է: Քննադատորեն մտածող մարդն առանց քննարկելու, բանավիճելու այնքան էլ հաճախ չի կիսում մեկ ուրիշի տեսակետը: Նա կարողանում է մտածել և ինքնուրույն, ազատ ու անկաշկանդ արտահայտել իր կարծիքները:

Դասավանդման ընթացքում կիրառելով քննադատական մտածողության զարգացմանը նպաստող մեթոդներ ու հնարներ՝ լիովին համոզվել ենք, որ մեր փոքրահասակ սաներն էլ կարող են սովորել քննադատաբար մտածել, լինել իրենց ուսումնառության ակտիվ դերակատարները, համագործակցել իրենց դասընկերների հետ: Աշակերտները դառնում են ակտիվ սովորող, մտածող և ստեղծագործող անհատներ:

Ի վերջո, արդյունավետ քննադատական մտածողություն դրսևորելու համար նրանք պետք է.

- զարգացնեն իրենց ինքնավստահությունը և հասկանան, որ իրենց կարծիքներն ու մտքերն արժեքավոր են,
- ակտիվորեն մասնակցեն ուսումնական գործընթացին,
- հարգանքով լսեն բազմազան կարծիքները,
- պատրաստ լինեն և' ձևակերպել, և' հարկ եղած դեպքում նաև կասեցնել սեփական դատողությունները:

Յուրաքանչյուր առարկայի ծրագրով նախատեսված գիտելիքների ուսուցումը չի կարող երբեք իր մեջ ընդգրկել այն բոլոր գիտելիքներն ու հասկացությունները, որոնք երեխան պետք է ստանա այդ ուսումնական առարկայից: Ծրագրում տրվածը միայն սույն հիմնականն է, որ անհրաժեշտ է տվյալ առարկայից ընդհանուր գաղափար տալու համար,

իսկ մնացածը երեխաներն իրենք պետք է ինքնուրույն կերպով ստանան շրջապատից ու գրքերից:

Այսինքն՝ յուրաքանչյուր ուսուցչի գերխնդիրն է սովորել սովորեցնելը:

Ասվածի վառ ապացույցն է ինքնուրույն ընթերցանության պարապմունքի կազմակերպումը: Առաջին դասարանի երկրորդ կիսամյակում աշակերտներն աստիճանաբար սովորում են առանց ուրիշի օգնության կարդալ անծանոթ գիրքը, գտնել վերնագիրը, հեղինակի անունը, դիտել նկարազարդումները և դրանց հիման վրա որոշել գրքի թեման:

Ինքնուրույն ընթերցանությունը կազմակերպելիս անպայման պետք է նկա- տառել.

- սովորողների պատրաստվածության մակարդակը,
- ծնողների սոցիալական վիճակը, դասարանի և դպրոցի գրադարանի փաստացի ֆոնդը,
- երեխաների հետաքրքրությունների շրջանակը:

Այս բոլոր փաստերի հաշվառմամբ ինքնուրույն ընթերցանության գրքերի և առանձին ստեղծագործությունների ընտրությունը պետք է կատարվի հետևյալ պայմանների առկայությամբ.

1. Տեքստը պետք է լինի ծավալով փոքր պարզ, մատչելի, թեման հոգեհարազատ, գաղափարը' հասկանալի:
2. Ինքնուրույն ընթերցանության համար ընտրված գրքերը գեղարվեստական ձևավորմամբ պետք է լինեն այնպիսին, որ երեխաները հետաքրքրվեն նկարազարդումներով, հրճվեն հերոսների նկարներով:

Ինքնուրույն ընթերցանություն կազմակերպելիս պետք է հաշվի առնել արդի դարաշրջանում մշտապես հնչող հետևյալ կարևոր պահանջը, կրտսեր դպրոցականների մեջ սերմանել ընթերցասիրություն,

զարգացնել գեղարվեստական ստեղծագործության գաղափարը հասկանալու, եզրահանգումներ, ընդհանրացումներ անելու կարողություններ:

Իսկ ինչպե՞ս, ի՞նչ ճանապարհով, ի՞նչ հնարներով: Անհրաժեշտ է կրտսեր դպրոցականների մեջ ձևավորել սեր և ընթերցանության նկատմամբ այնպիսի վերաբերմունք, որ նպաստի նրանց մեջ անձնային բարձրարժեք որակների զարգացմանը, գրագետ ընթերցողի, կարդալու պահանջմունք ունեցող քաղաքացու դաստիարակմանը:

Հաճախ ենք հանդիպում աշակերտների, որոնք նոր են կարդացել ու շատ քիչ բան են հասկացել:

Այդ ինչպե՞ս կարող է աշակերտը կարդալ ու չհասկանալ կարդացածը: Ի՞նչ կարող ենք անել բարելավելու նրանց, այսպես կոչված, ընթերցողական ընկալունակությունը: Ինչո՞ւ երեխան, որ կարող է բառերը կարդալ և քննարկման ժամանակ հասկանալ այդ մտքերը, չի կարողանում ընկալել իր իսկ կարդացածը:

Վատ ընկալունակությունը հաճախ բացատրվում է շատ պարզ պատճառով վատ ընկալողները պարզապես ուշադիր չեն կարդում: Նրանք չգիտեն՝ ինչպես կարդան, որ կենտրոնանան հիմնական մտքերի վրա: Ուսուցիչներս, տիրապետելով քննադատական մտածողության զարգացմանը նպաստող մեթոդներին ու հնարներին, կարող ենք օգնել մեր աշակերտներին խորհել կարդացածի մասին: Դրանով իսկ կբարձրանա նրանց ընթերցողական ընկալունակությունը: Ընթերցանությունն ակտիվ գործընթաց է, որն ընթերցողին ստիպում է մտածել ընթերցվող նյութի շուրջ և ակտիվորեն կառուցել իմաստ: Եթե ընթերցողը չի մտածում այն գաղափարների մասին, որոնք արտահայտվում են ընթերցվող բնագրում, ապա իսկական

ընթերցանություն տեղի չի ունենում: Ընթերցողը պետք է գիտակցաբար ջանքեր գործադրի կարդացածը հասկանալու համար:

Դեռևս ամառային արձակուրդներին աշակերտներին առաջարկում եմ ընթերցել իրենց նախընտրած ստեղծագործությունները: Ընդ որում, նախօրոք պայմանավորվում ենք ծնողների հետ, որ նրանք իրենց երեխաներին օգնեն ընտրել այնպիսի մանկական գրականություն, որն աչքի ընկնի պարզությամբ, մատչելիությամբ, խոր գեղարվեստականությամբ և կերպարների ու նկարագրված դեպքերի վառ գունավորմամբ: Նման ստեղծագործությունները երեխաների մեջ անհրաժեշտ հույզեր ու ապրումներ կառաջացնեն: Նրանք կզգան ու հոգեպես կվերապրեն այն ամենը, ինչ նկարագրված է գրքում: Երբ աշակերտներին թույլ է տրվում ընտրել ինչ կարդալ, նրանք սկսում են կարդացածի հանդեպ սեփականության զգացում ունենալ: Դա առաջին վճռորոշ այն քայլն է, որն ընթերցողին դարձնում է ներգրավված:

Սեպտեմբերին, հենց ինքնուրույն ընթերցանությանը հատկացված առաջին դասաժամին, որն անվանում ենք խորհրդակցության ժամ, յուրաքանչյուրը ներկայացնում է իր ընթերցած գիրքը գովազդի տեսքով առանց բովանդակությունը պատմելու: Յուրաքանչյուր աշակերտ ձգտում է առավելագույնս գեղեցիկ ձևով ներկայացնել գովազդը, որպեսզի իր ընկերների ընտրությունը կանգ առնի հենց իր նախընտրած գրքի վրա, և բոլորն ընթերցեն այն: Ներկայացողներին ուղղում ենք հարցեր.

- Ինչո՞ւ ես ընտրել հատկապես այդ գիրքը:
- Ինչպե՞ս է այն կարդացվում:
- Դու ծանո՞թ ես այդ հեղինակի որևէ այլ ստեղծագործության:
- Անծանոթ բառեր կայի՞ն: Ինչպե՞ս իմացար դրանց բացատրությունը:

Ներկայացնողն իր ընթերցած գիրքը փոխանցում է երեխաներին, որպեսզի վերջիններս շոշափեն այն, թերթեն, դիտեն կազմը, նկարազարդումները և այլն: Այնուհետև քվեարկում ենք և ըստ քվեարկության արդյունքների ընտրում որևէ մեկի ընթերցած գիրքը և որոշում այն ընթերցել: Միասին սահմանում ենք այն ժամանակահատվածը, որն անհրաժեշտ է աշակերտներին գիրքն ընթերցելու համար: Հաշվի է առնվում նաև տվյալ գիրքն ընթերցած աշակերտի կարծիքը: Աշակերտներն անպայման պետք է իմանան ընթերցանությանը հատկացվող ժամանակը, որպեսզի ըստ այդմ կարողանան պլաններ կազմել: Հիշեցնում ենք, որ ընթերցելուց հետո պետք է համագործակցային խմբում մասնակցեն քննարկմանը: Նման հանձնարարությունն օգնում է աշակերտներին ընթերցման ժամանակ ուշադրություն դարձնել այնպիսի մանրամասների վրա, որ նախկինում չէին նկատել:

Այսինքն՝ եթե ընթերցողն իր առջև որոշակի նպատակ կամ խնդիր է դնում նախքան կարդալն, ապա նա ընթերցման ժամանակ վերահսկում է իր սեփական ընկալումը: Երբ գիտակցում է, որ ինչ-ինչ իրադարձությունների իմաստը լավ չհասկացավ, կամ կորցրեց պատմվածքի «թելը», ձեռնարկում է ճշգրտման քայլեր՝ վերընթերցում է, չհասկացած հատվածը արագ վերանայում, բառի իմաստը փնտրում բառարանում և այլն:

Մինչ կարդալ սկսելը մտագրոհի միջոցով կազմում ենք բնագրի իմաստի կանխավարկածը: Եթե ընթերցողը նախօրոք գիտի, որ ինքը պատմվածք է կարդալու, ապա մինչ բուն ընթերցանությունն սկսելը փորձում է վերնագիրն ու նկարները օգտագործել որպես բանալի պատմվածքի բովանդակությունը կռահելու համար: Այս դեպքում նա կանգնած է լավ ընկալման շեմին:

Տրված ժամանակը լրանալուց հետո սկսվում է քննարկման դասաժամը: Աշակերտները բաժանվում են 4-5 համագործակցային խմբերի: Նրանց ուղղվում են որոշակի հարցեր, որոնց պատասխանները քննարկվելու են: Այսպես.

- Ի՞նչը ձեզ դուր եկավ այս գրքում:
- Ի՞նչը դուր չեկավ:
- Ինչպե՞ս էր գիրքն սկսվում:
- Ինչպե՞ս ավարտվեց:
- Արդյոք ընդունելի՞ ավարտ էր:
- Ի՞նչն էր կարևոր:
- Գիրքն ընթերցելուց հետո ի՞նչ մտքեր են ծագել ձեր գլխում:
- Ի՞նչն այլ կերպ կանեիք, եթե կերպարներից մեկը լինեիք:
- Ի՞նչ սովորեցիք հերոսներից:
- Ո՞ր կերպարն ամենաշատը ձեզ դուր եկավ:
- Ի՞նչ հասկացաք կարդալով այս գիրքը:
- Կարո՞ղ եք այլ ավարտ հորինել:
- Ինչպիսի՞ն էր տրամադրությունը:
- Ի՞նչ կարևոր իրադրություն եք վերհիշել:
- Ո՞րն էր ձեր սիրելի հատվածը:
- Այս գիրքը ձեզ որևէ դեպք կամ որևէ բան հիշեցնու՞մ է:
- Ձեր կարծիքով ինչո՞ւ է հեղինակը գրել այս գիրքը:

Այնուհետև խմբերն իրենց ընտրությամբ թղթապանակ կամ վահանակ են պատրաստում տվյալ գրքի վերաբերյալ: Խմբի անդամների միջև կատարում ենք աշխատանքի բաժանում ընտրելով հետևյալ խորագրերը.

- Պատմվածքի քարտեզը.
- Հեղինակի մասին.

- Պատմվածքի «մանրակերտը».
- Մեր տպավորությունը.
- Գլխավոր հերոսի բնութագիրը.
- Նամակ հերոսին.
- Հերոսի կողմից նամակ.
- Պատմվածքի տարբեր հատվածների նկարազարդումը:

Խոսնակները ներկայացնում են իրենց խմբերի աշխատանքները: Դրանք փակցվում են միջանցքում, որպեսզի մյուս դասարանների աշակերտները նույնպես հետաքրքրվեն այդ պատմվածքով և ցանկություն ունենան ընթերցելու այն:

Ներկայացնում եմ քննադատական մտածողության զարգացմանը նպաստող մեթոդների ու հնարների կիրառմամբ ինքնուրույն ընթերցանության դասերի անցկացման իմ փորձը չորրորդ դասարանում:

4.Դասի նմուշօրինակ

Դասարան՝ չորրորդ

Առարկա՝ Մայրենի

Տևողություն՝ 90 րոպե

Դասի տիպն՝ ինքնուրույն ընթերցանության դաս

Թեման՝ <<Առաջին դասարանցին>>

Կահավորանքը՝ գունավոր ինքնակպչուն թղթեր, A4 չափսի թղթեր, գունավոր գրիչներ

Ուսումնառության ակնկալվող արդյունքներն՝ ըստ չափորոշչային մակարդակների

1-ին մակարդակ

- Բարձրաձայն կամ լուռ կընթերցեն տեքստը,
- Կհասկանան տեքստում նկարագրված իրադարձությունների հաջորդականությունը,

2-րդ մակարդակ

- Կվերլուծեն տեքստի բովանդակությունը՝ մշակելով հերոսներին և իրադարձությունները նկարագրելու կարողություններ
- Կվերարտադրեն տեքստը՝ վերաբերմունք դրսևորելով հերոսների վարքագծի նկատմամբ, հասկանալով նրանց զգայական ապրումները:

3-րդ մակարդակ

- Արտահայտիչ կընթերցեն տեքստը, ձայնի բարձրությունն ու տեմպը՝ համապատասխանեցնելով իրավիճակների և հերոսների հույզերին,
- կվերարտադրեն տեքստի բովանդակությունը՝ գնահատելով գործող անձանց վարքագծերը:

Դասի ընթացքը

Խթանում

Դասարանն ակտիվացնելու, երեխաների հետաքրքրությունը բորբոքելու նպատակով երեխաներին դիմել հետևյալ հարցերով.

Մուտքի տոմս

- հիշում եք ձեր առաջին օրը դպրոցում,
- ում հետ էիք եկել,
- ինչպիսի զգացումներ ունեիք:

Հարցերն ուղղել՝ կիրառելով Արդարության գավաթ մեթոդը: Մեթոդի կիրառումը հնարավորություն կտա կենտրոնացնել բոլորի ուշադրությունը և մինչ դասի ավարտը բոլորին հնարավորություն տալ արտահայտվելու:

Իմաստի ընկալում

Կանխագուշակում, նպատակադրում

Գրատախտակին գրել տեքստի վերնագիրը՝ <<Առաջին դասարանցին>>:

-Արտահայտեք ձեր ենթադրությունները տեքստի բովանդակության վերաբերյալ:

Երբևէ դուք ստիպված եղե՞լ եք գնալ նոր դպրոց: Ի՞նչ զգացումներ եք ունեցել: Ինչպե՞ս է այդ գործն ընթացել: Այս պատմվածքը դպրոց գնալու հետ կապված արտառոց խնդրի մասին է:

Կարդալ պատմվածքը և նշված տեղերում կանգ առնել հարցերին պատասխանելու համար: Կարդալու ընթացքում կանգ առնել խորհելու և կանխատեսումներ անելու համար: Պատմվածքի ընթերցումը լրիվ ավարտելուց հետո, ավելի մանրամասն քննարկել;

Առաջին դասարանցին

Մի անգամ, հենց ուսումնական տարեսկզբին, մի հայրիկ գալիս է դպրոց ե քայլերն անշեղ ուղղում է դեպի տնօրենի աշխատասենյակը:

– Դուք կարո՞ղ եք իմ տղային ցուցակագրել Ձեր առաջին դասարանում: Ես արդեն դիմել եմ վեց դպրոց, սակայն դրանցից ոչ մեկը չի ընդունել նրան:

– Իսկ ի՞նչ պատճառով նրան չէին ընդունում, ի՞նչ է պատահել- հարցրեց տնօրենը:

Կանգառ

Ի՞նչ եք կարծում՝ ինչն է պատճառը, որ տղային չեն վերցնում դպրոց: Բանն ինչո՞ւմն է: Ձեր կարծիքով՝ պատմվածքն ինչի՞ մասին է: Այս պատմվածքի խնդիրն ի՞նչն է: Ինչու՞ եք այդպես կարծում: Այժմ կարդացեք հաջորդ հատվածը տեսնելու համար, թե խնդիրն ինչն է:

- Տղաս շատ է խոշոր, և չի կարող դասարանում նստել:
- Իսկ միջանցքում կարո՞ղ է նստել:
- Միջանցքն էլ հարմար չէ, - ասաց հայրը:
- Այդ դեպքում, մենք նրանք կտեղավորենք մարմնամարզական դահլիճում:
- Բայց մարմնամարզական դահլիճն էլ նրան հարմար չէ,- տխուր պատասխանեց հայրը:
- Ես շատ ափսոսում եմ, սիրելի հայրիկ, բայց, այդ դեպքում, մենք էլ չենք կարող ընդունել Ձեր տղային,- ասաց տնօրենը:
- Ես հասկանում եմ Ձեզ, բայց վարձեք ինձ էլ հասկանալ, - պաշտպանվեց հայրիկը, - իմ Պավկոյի տարիքը հասել է և նա անպայման պետք է դպրոց հաճախի: Ես չեմ կարող նրան թողնել առանց կրթության:

Կանգառ

Այժմ ի՞նչ կարծիք ունեք: Զարմացա՞ք: Ի՞նչ եք կարծում,Պավկոն ի՞նչպես էր ցգում իրեն: Իսկ հա՞յրը: Ի՞նչ եք մտածում նրա զգացմունքների մասին:

Ձեր կարծիքով ի՞նչ է կատարվելու հետո: Տնօրենը թույլ կտա՞ Պավկոյին հաճախել իր դպրոց: Եթե այո, ինչպե՞ս են նրանք լուծելու այդ խնդիրը: Ինչպե՞ս է նա տեղավորվելու դպրոցում:

Այժմ կարդացեք հաջորդ հատվածը տեսնելու համար, թե ինչ է պատահում:

Վերջապես նրանք համաձայնեցին Պավկոյին դպրոց վերցնել: Որոշվեց, որ նա պետք է նստի բակում, պատուհանից ներս նայի ու մասնակցի դասին: Ձմռանը, Պավկոն էլի պիտի մնար բակում: Նա պիտի մուշտակ հագներ և օգտագործեր հատուկ ականջակալներ, որովհետև դասարանի պատուհանները, իհարկե, փակ էին լինելու: Իսկ ինչ վերաբերում է գրելուն կամ նկարելուն, ապա դա հեշտ լուծեԼի հարց էր, նա փոքրիկ գրատախտակը պետք է դներ ծնկներին:

Հաջորդ առավոտյան Պավկոն եկավ դպրոց: Իր հսկայական կոշիկները հագին նա բակում կանգնած ոտքից ոտք էր փոխվում, իսկ գլուխը համարյա հասնում էր ծխնելույգի բարձրությանը: Երեխաները, տեսներով Պավկոյին, փախան ներս՝ իրենց դասարանները, և պատուհաններից սկսեցին դուրս նայել: Պավկո Դեբրանիկ էլ իր հերթին սկսեց նայել պատուհաններից ներս: Նա ցանկանում էր իմանալ, թե որն է իր դասարանը: Բայց այնտեղ լռություն էր տիրում: Ապշած երեխաները հայացքները հառել էին նրա վրա: Իսկ Պուսվկո՞ն: Դե նա էլ նրանց էր նայում:

Կանգառ

Իսկ հիմա, ի՞նչ կարծիքի եք Պավկոյի դպրոց հաճախելու հարցի լուծման մասին: Դա հնարավո՞ր բան է: Ինչու՞ այո, կամ ինչու՞ ոչ: Ձեր կարծիքով, մյուս երեխաներն ի՞նչ կմտածեն Պավկոյի մասին: Ի՞նչ կզգայիք, եթե երեխա լինեիք և ձեր դասարանի պատուհանից դուրս մի հսկա կանգնած լիներ: Ի՞նչ կզգայիք, եթե Պավկոյի փոխարեն դուք լինեիք:

Հաջորդ հատվածը կարդալիս ուշադրություն դարձրեք, թե ինչ է պատահում երեխաներից մեկին:

Հանկարծ, առաջին հարկի պատուհաններից մեկից հնչեց մի աղջկական ձայն. «Դու առաջին դասարանի՞ց ես»: - Ե՞ս, - հարցրեց Պավկոն և մի քիչ ետ-ետ գնաց, որ տեսնի, թե ով է իր հետ խոսում: - Այո, առաջին դասարանից եմ, - պատասխանեց Պավկոն և ժպտաց այդ համարձակ աղջնակին: Աղջիկը կլորիկ դեմք, կճատ քիթիկ ու մուգ մազեր ուներ:

– Ես էլ եմ առաջին դասարանից, իսկ անունս Բետկա է, - ասաց աղջիկը,- երեկ հայրիկս մի հեքիաթ կարդաց ինձ համար: Այն բարի հսկայի մասին էր: Դու՞ էլ ես բարի հսկա:

Պավկոն գլխով արեց, բայց հասկացավ, որ դա ոչ մի բան էլ չի ապացուցում: Նա խորը մտքերի մեջ ընկավ: Բետկան տեսավ, որ մտածելուց Պավկոյի մեծ աչքերում կրակ կայծկլտաց:

Կանգառ

Հիմա ի՞նչ եք մտածում: Պավկոն ի՞նչ պետք է անի: Ձեր կարծիքով նա բարի՞, թե՞ չար հսկա է: Եթե բարի է, ինչպե՞ս է ապացուցելու դա: Ի՞նչ է, ձեր կարծիքով, տեղի ունենալու հիմա: Պավկոն ի՞նչ կանի: Բետկան կվախենա՞ նրանից: Իսկ մյուս երեխաները՞: Այժմ կարդացեք պատմվածքը մինչև վերջ և տեսեք, թե դրանից ինչ է ստացվում:

Ապա Պավկոն ձեռքն այնքան մեկնեց, որ հասավ անտառին: Երբ նա ձեռքը հետ քաշեց, ափին մի սկյուռիկ էր նստած: Նա սկյուռիկին մոտեցրեց պատուհանին և փոխանցեց Բետկային:

- Վա՛յ, սկյուռիկ: Ինչ գեղեցիկ է, - ճչաց փոքրիկ աղջնակը, - մի հատ կաղին կպոկե՞ս նրա համար:

Պավկո Դեբրանկը ձեռքը նորից երկարեց: Նա ձեռքով հասավ մի կաղնու գագաթին, ու երբ նորից իջեցրեց, այն լի էր կաղիններով:

Երեխաները հրճվանքով հետևում էին նրան: Վախը լրիվ անցել էր, չքացել էր, որովհետև նրանք համոզվել էին, որ Պավկոն, չնայած հսկա էր, սակայն չէր նեղացնի անգամ սկյուռիկին:

Դրանից հետո երեխաները բոլոր դասամիջոցներին խաղում էին: Երբ նրանք ոսկե դարպասներ էին խաղում, Պավկոն դարպասն էր, երբ նրանք ֆուտբոլ էին խաղում, Պավկոն դարպասապահն էր: Դա նրա համար դժվար չէր: Նա մեկնած ձեռքի ափով ծածկում էր դարբասի կեսը: Հետո մեկնում էր մյուս ձեռքն ու ծածկում էր երկրորդ կեսը: Նա միայն ափսոսում էր, որ պահմտոցի չէր կարող խաղալ: Նա պահ մտնելու տեղ չուներ՝ ամենուր, միևնույն էր, երևում էր: Ծուտով երեխաները դադարեցին պահմտոցի խաղալ, որոհետև առանց Պավկո Դեբրանիկի խաղալը հետաքրքիր չէր: Բոլոր երեխաները ցանկանում էին Պավկոյի

ընկերը լինել: Բայց նրա ամենաթանակագին ընկերը... Դե, դուք կռահում եք՝ ով էր: Կլորիկ դեմքով, կճատ քիթիկով ու մուգ մազերով Բետկան էր: Այդ փոքրիկ աղջնակը, որն առաջինն էր խոսել Պավկոյի հետ:

Մնում է ավելացնել, որ Պավկո Դեբրանիկը լավ աշակերտ էր և ամեն օր մեղվիկ էր ստանում (մեղվիկը սլովակական դպրոցներում նույնն է, ինչ ուրախ մռութիկն ամերիկյան դպրոցներում):

Կանգառ

Եվ այսպես, ի՞նչ եք հիմա մտածում: Ձեր կարծիքով Պավկոն ու մյուս երեխաներն ինչպե՞ս են զգում: Իսկ ի՞նչ կասեք Պավկոյի հայրիկի մասին: Նա ինչպ՞ես է զգում հիմա:

Պավկոն շատ էր տարբերվում բոլոր երեխաներից: Ի՞նչ եք կարծում, նա ի՞նչ էր զգում բոլորից այդքան տարբեր լինելով: Դուք երբեէ եղել եք այնպիսի իրավիճակում, երբ բոլորից տարբերվում էիք կամ ձեզ այդպես էիք զգում: Այժմ ի՞նչ կարծիք ունեք պատմվածքի մասին: Ո՞րն էր դրա հիմնական իմաստը: Այս պատմածքն ի՞նչ դաս է տալիս: Ինչու՞ եք այդպես կարծում:

Զրույց տեքստի բովանդակության շուրջ՝ նախնական ընկալումը պարզելու նպատակով

Հարցեր.

- հաստատվեցին ձեր կանխատեսումները,
- ովքեր էին առավել ճիշտ կանխագուշակում,
- ովքեր էին տեսքտի հերոսները,
- որն էր այս պատմվածքի գլխավոր միտքը,

- ինչ է պատմվածքը սովորեցնում:

Տեքստի բարձրաձայն ընթերցում

Ընթերցվում է մեկնաբանություններով և <<Զրույց հեղինակի հետ>> հնարի կիրառմամբ:

Աշխատանք տեքստի բովանդակության շուրջ՝ վերլուծություններ և եզրահանգումներ կատարելու նպատակով:

Պատմվածքի յուրաքանչյուր հատվածը կարդալուց հետո վերնագրել այն: Վերնագրերը գրել գրատախտակին, որպեսզի տեքստը պատմելիս երեխաները օգտվեն կլազմված պլանից:

Տեքստի բարձրաձայն ընթերցումից հետո.

Պնդում

- ինչ զգացողություններ ունեցաք,

Օժանդակող հարց

- կա տեքստում մի բան, որը ձեզ զարմացրեց կամ ստիպեց մտածել,

Հարց

- կա մի բան, որի հետ համաձայն չեք:

Տեքստի վերարտադրում

Կարելի է կիրառել տեքստի վերարտադրման տարբեր տեսակներ՝ իրականացնելով տարամակարդակ ուսուցում:

Առաջին մակարդակ

- Օգտվելով կազմած պլանից վերարտադրել տեքստը ընդարձակ կամ համառոտ:

- Երկրորդ մակարդակ
- Վերարտադրել տեքստը ստեղծագործաբար,
- պատմել Պավկոյի անունից,
- պատմել Բետկայի անունից:

Երրորդ մակարդակ

- Պատմեք՝ հորինելով շարունակություն ինչ եղավ հետո:

... Մի անգամ ...

Կշռադատում

Առաջադրանքներ ինքնուրույն աշխատանքի համար

Ինքնուրույն աշխատանք պաստառի վրա փակցվում են գունավոր ինքնակպչուն թղթեր, որոնց վրա գրված են տարամակարդակ առաջադրանքներ:

Դեղին թուղթ՝ առաջին մակարդակ:

Այն պատմվածքից ես սովորեցի ...

Կանաչ թուղթ՝ երկրորդ մակարդակ:

Դու ինչպես կվարվեիր երեխաների փոխարեն ...

Վարդագույն թուղթ՝ երրոդ մակարդակ:

Քո կարծիքով՝ ինչ զգացումներ ուներ Պավկոն պատմության սկզբում և վերջում:

Կարճ տեղեկանք մասնակիցներին հաղորդելու համար: Մարիա Դուրիկովան՝ «Առաջին դասարանցին» պատմվածքի հեղինակը, Սլովակիայի ամենահայտնի հեղինակներից է: Նա իր պատմվածքների

մեծ մասը գրել է 1960-ականներին: Նա նաև սլավակական հայտնի մանկական ամսագրի գլխավոր խմբագիրն էր: Նրա գրական ստեղծագործությունը մեծ ներդրում է համարվում սլովակական դասական մանկագրության մեջ: Նա այսօր էլ ապրում է իր հայրենի Սլովակիայում և հանդիպում ու զրուցում է փոքրիկ երեխաների հետ:

Ելքի քարտ

Ինչ սովորեցի այս պատմվածքից:

5. Քննադատական մտածողության զարգացումը գրավոր աշխատանքի միջոցով

Գրավոր աշխատանքը քննադական մտածողությունը խթանող հզոր միջոց է: Սակայն, գրավոր աշխատանքի արժեքը, որպես քննադատական մտածողության խթանիչ, հաճախ թերագնահատվել է մեր դպրոցներում դրա կիրառման ձեերի պատճառով: Գրավոր հանձնարարությունները մեծ մասամբ նպատակաուղղված են լինում վերջնական արդյունք ստանալուն, և ոչ թե ընթացքին: Հաճախ գրավոր առաջադրանքները չեն առնչվում ուսումնական ծրագրի հետ, այսինքն ուսուցիչները հաճախ են երեխաներին տալիս այնպիսի գրավոր

հանձնարարություններ, որոնք սովորած նյութի հետ իմաստային շատ թույլ կապ ունեն:

Քննադատաբար մտածելու համար երեխան պետք է մտածելու մի հետաքրքիր թեմա ունենա: Քննադատական մտածողությունը պետք է կազմի երեխայի ուսուցման հիմքը հանդիսացող համապարփակ ու ներդաշնակ ուսումական ծրագրի անբաժան տարրը: Գրելը քննադատաբար մտածելու հզոր միջոց է, և ուսուցիչը պետք է կարողանա դասարանում հաստատել քննադատաբար ե ազատ մտածելու և գրելու համապատասխան միջավայր ու մթնոլորտ:

Գրելը որպես քննադատական գրագիտության միջոց չափազանց արդյունավետ է հատկապես մտածողությանը, կշռադատմանը, խնդիրների լուծմանն ուղղված ճանաչողական վարժությունների առումով: Գրելու ու մտածելու մեթոդները պահանջում են իմաստալից ուսումնական իրավիճակ, որի համատեքստում Է միայն հնարավոր դրանք օգտագործել:

Գրելը որպես քննադատական մտածողության զարգացման գործիք թերագնահատելու միտումը բացատրվում Է այն իրողությամբ, որ այն չափազանց հաճախ Է կիրառվում գիտելիքների գնահատման համար, ինչպես օրինակ' քննությունների կամ ստուգողական աշխատանքների ժամանակ, կամ օգտագործվում Է որպես միջոց' ցուցադրելու գրելու կարողությունը, օրինակ' թեմատիկ շարադրությունները: Ընդ որում, այդ թեմաները շատ հաճախ հանձնարարվում են առանց անհատ աշակերտի հետաքրքրվւսծությունը դրանով կամ գիտելիքները հաշվի առնելու: Ավելին, նման գրավոր աշխատանքների միակ ունկնդիրը ուսուցիչն Է, որին, որպես կանոն, ավելի շատ հետաքրքրում են գրավոր խոսքի մեխանիզմները, քան այն բովանդակությունը, որ հեղինակը փորձում Է

հաղորդել: Հաճախ աշխատանքները վերադարձվում են շաբաթներ անց, միայն սխալների ուղղումներով ե գնահատականով: Հեղինակը համարյա որեէ իմաստալից արձագանք չի ստանում ե նման հանձնարարությունը ընկալում է ավելի շուտ որպես վարժություն, քան որպես մտքերն արտահայտելու միջոց: Նման կարգի գրավոր աշխատանքը սովորաբար հակակրանք է ծնում գրավոր խոսքը օգտագործելու նկատմամբ, ե արդյունքում' երեխաները տհաճությամբ են կատարում այդ առաջադրանքները:

Ուսուցիչները, գրելուն՝ որպես քննադատական մտածողության խթանի, դիմելուց առաջ, պետք է հիշեն, որ շատ աշակերտներ բացասական վերաբերմունք ունեն գրելու ե սեփական տեսակետները սեփական բառերով և գործողություններով արտահայտելու նկատմամբ: Անհրաժեշտ է ունենալ մի շարք հիմնական պատկերացումներ, որոնք կուղենշեն գրելու արդյունավետ կիրառումը որպես մտածողության խթանման միջոց: Նախ, Էապես կարևոր է հասկանալ' գրելն ինչ է: Ըստ Ջեյսմ Սʼոֆեթի «գրել նշանակում է ինչ-որ բանի մասին խոսել ինչ-որ մեկի հետ, որ հետաքրքրվում է այդ բանով»: Եթե մեկնաբանենք այս հայեցակարգը, ապա կստացվի, որ մարդն իր ընտրությամբ գրում է մի բանի մասին, որը հետքրքրում է այդ գրավոր խոսքի հասցեատիրոջը: Երբ ուսուցիչների կարծիքը փոխվի գրելու նշանակության մասին, և նրանք էլ սկսեն ընկալել այն ինչպես նշվեց վերևում, աշակերտները կստանան գրավոր աշխատանքերի համար իրենց թեմաներն ընտրելու և իսկական ունկնդիր գտնելու հնարավորություն:

Մտածելու համար կատարվող գրավոր աշխատանքի ունկնդիրն ինքը' հեղինակն է: Հեղինակը գրում է հասկանալու, պարզաբանելու, մտապահելու, կազմակերպելու համար, կարճ ասած' գաղափարների ե

ինֆորմացիայի մասին խորհելու համար: Գրելու հենց այսպիսի կիրառությունն է (երբ մարդ ինքն իր համար է գրում), որ հանդիսանում է քննադատական մտածողությունը խթանող զորեղ գործիք:

Դասավանդման հատուկ սկզբունքներ կան, որոնք դասարանը նախապատրաստելու համար շատ կարեոր նշանակություն ունեն, եթե իհարկե նպատակ ունենք, որ գրավոր աշխատանքը նպաստի երեխաների քննադատական մտածողության զարգացմանը: Առաջին՝ մտածողության զարգացմանն ուղղված գրավոր աշխատանքը չի գնահատվում: Նման աշխատանքում կարևորը մտքերն ազատ արտահայտելն է: Սրան հասնելու համար գրողին պետք է թույլ տալ ազատ լինել ե չմտահոգվել գրավոր խոսքի տեխնիկական կողմի մասին, ինչպես օրինակ քերականությունը կամ ուղղագրությունն է: Քանի որ աշակերտները վարժված են, որ գրավոր աշխատանքը պետք է գնահատվի, հաճախ բավականին ժամանակ է պահանջվում, մինչե նրանք համոզվում են, որ իրենց ուսուցչին իսկապես հետաքրքրում են նրանց մտքերը, և որ նա իսկապես գրավոր առաջադրանքը տալիս է որպես քննադատական մտածողության խթանիչ միջոց: Երկրորդ սկզբունքը այն է, որ աշակերտները պետք է իրենց բավականաչափ ազատ ու ապահով զգան ռիսկի գնալու համար: Նրանք պետք է զգան, որ ազատ կարող են արտահայտել իրենց մտածածը, և որ այն հարգանքով կընդունվի: Ապա, նրանք պետք է հասկանան, որ տրված հարցերը չունեն միակ ճիշտ պատասխան, որ նրանց առաջարկած մտքերը կամ խնդիրների լուծումները նույնքան արժեքավոր են, որքան որեէ մեկինը: Նման միջավայր հաստատելու համար ուսուցիչը պետք է ստեղծի իրավիճակներ, որտեղ տրվում են բազմազան իրավահավասար պատասխաններ ենթադրող հարցեր, և որտեղ ուսուցիչն աշակերտների

հետ միասին որոնում է իրական ուսումնական խնդիրների պատասխաններն ու լուծումները:

Եվ վերջապես, եթե խնդիրն այն է, որ գրելը նպաստի քննադատական մտածողության զարգացմանը, ապա աշակերտները պետք է բավականաչափ հնարավորություններ ունենան արտահայտելու ու քննարկելու կարդացածից կամ սովորածից բխող մտքերը և լսելու իրենց մտքերի արձագանքը: Երբ երեխային առաջարկվում է թղթին հանձնել ծագած մտքերը, նրան պետք է նաև առաջարկվի դրանք ընկերների հետ քննարկելու հնարավորությունը:

Խմբավորում

Խմբավորումն ուսումնական մեթոդ է: Այն խրախուսում է երեխաներին ազատ ու բաց մտածել որեէ թեմայի շուրջ: Այն միայն պետք է ունենա բավականաչափ լայնածավալ կառուցվածք, որպեսզի մղի մտածել գաղավոսրների միջև գոյություն ունեցող կապերի մասին: Այն մտածողության ոչ գծային ձե է և առավել մոտ է մեր մտքի բնականոն աշխատանքին:

Խմբավորումը կարող է օգտագործվել և խթանման, և կշռադատման փուլում: Այն կարող է առաջարկվել, մինչե թեմայի ավելի խորը ուսումնասիրությունը: Այն կարող է օգտագործվել նաև որպես սովորածն ի մի բերելու միջոց, որպես նոր զուգորդումներ կառուցելու կամ նոր պատկերացումները գրաֆիկորեն արտահայտելու միջոց: Սա գրավոր վարժություն է, որ համեմատաբար հեշտությամբ է ընդունվում նույնիսկ գրել չսիրող աշակերտների կողմից: Մեծ մասամբ, այս վարժության շնորհիվ հնարավոր է լինում հստակ պատկերացում կազմել որևէ թեմայի վերաբերյալ իմացության, ընկալումների և

պատկերացումների մասին: Քանի որ սա գրավոր վարժություն է, այն կատարողը հնարավորություն է ստանում տեղեկանալու իր իսկ մտքում ունեցած գիտելիքների և դրանց միջև գոյություն ունեցող կապերի մասին, որոնք, հնարավոր է, նա մինչ այդ կրում էր ենթագիտակցության շերտում:

Խմբավորման քայլերը պարզ են և հեշտորեն հիշվում են:

1. Գրել առանցքային բառը թղթի, ցուցատախտակի, գրատախտակի կամ որևէ այլ մակերեսի կենտրոնում:
2. Սկսել գրել ընտրած թեմային առնչվող բառերն ու արտահայտությունները:
3. Երբ գաղափարները գրելը վերջացնեն, գծիկներով միացել այն բառերը, որոնք իրենց կարծիքով իրար հետ առնչվում են:
4. Հնարավորին չափ շատ մտքեր գրել մինչև դրանք կամ ժամանակը սպառվեն:

Խմբավորումն օգտագործելիս մի քանի հիմնական կանոն կա, որ անհրաժեշտ է պահպանել:

1. Գրի առնել միտքը եկած բոլոր գաղափարները, չդատել դրանց ճշտության մասին, պարզապես գրել:
2. Չանհանգստանալ ուղղագրության կամ կետադրության կանոնների մասին:
3. Չդադարել գրեսլ, քանի դեռ մտքեր են արտահայտվում: Եթե մի պահ գաղափարների հոսքը դադարի, այնքան խզբզել թղթին, մինչե Էլի նոր մտքեր ծագեն:

4. Օգտագործել այնքան միացման գծիկ, որքան հնարավոր է: Չսահմանափակել մտքերի քանակը, հոսքը կամ դրանց միջև կապերը:
5. Առաջին անգամ խմբավորման մեթոդը ներկայացնելիս ընտրել այնպիսի թեմա, որ խմբի բոլոր անդամներին հոգեհարազատ լինի:

Խմբավորման վարժությունը խմբով կատարելուց հետո մասնակիցները այնքան փորձ են ձեռք բերում, որ լիովին պատրաստ են խմբավորման անհատական վարժություն կատարել: Սա շատ կարեոր քայլ է, քանի որ հենց այստեղ են նրանք լրիվ հասկանում այս վարժության արդյունավետությունն ու արժեքը: Այս պարագայում թեման կարեոր է, քանի որ այն պետք է ինչ-որ ծանոթ մի բանի մասին լինի, որպեսզի խումբը բավարար ինֆորմացիա ունենա խմբավորումն ամբողջական ներկայացնելու համար:

6. Եզրակացություն

Աշակերտը կարդալու ընթացում պետք է մտածի կարդացածի մասին, այլապես իսկական ընթերցանություն (ընկալում) տեղի չի ունենա: Արտադասարանային ընթերցանության պարապմունքներին քննադատական ընթերցանության զարգացմանը նպաստող մեթոդների ու հնարների կիրառումը օգնում է, որ ընթերցողը՝

- օգտագործելով որոշակի ռազմավարություններ՝ կառուցի իմաստներ, որոնք կօգնեն իրենց ընթերցանության ընթացքում կառուցել կարդացածի սեփական ընկալումը,
- գիտակցի և օգտագործի բնագրի առանձնահատկությունները, որոնք կօգնեն հասկանալ բնագրի իմաստը,
- վերահսկի իր ընկալման ընթացքը և հասկանա, թե որտեղ էր կարդացածն իմաստալից, իսկ որ մասում այն չհասկացվեց,
- չհասկանալու դեպքում փորձի գործադրել սեփական մտավոր կարողությունները:

Երբ նույն պատմվածքն ընթերցում են բոլորը և քննարկում, ապա այդպիսի ընթերցանությունը կարող է միավորել երեխաներին և նրանց մեջ զարգացնել համագործակցային և հաղորդակցական հմտություններ:

Մեր կարծիքով ինքնուրույն ընթերցանության նման ձևով կազմակերպումը նպաստավոր պայմաններ է ստեղծում, որպեսզի աշակերտների մեջ արթնանա ընթերցանության հանդեպ սեր, նրանք գնահատեն իրենց ընթերցածը, կարողանան ընթերցանության միջոցով ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ և վերահսկեն իրենց ընթերցածը:

Աշակերտներին ընթերցասեր դարձնելու համար անհրաժեշտ է լուրջ ակնկալիքներ ունենալ յուրաքանչյուրից: Նպաստել երեխաների քննադատական մտածողության զարգացմանը, նրա տարիքին

համապատասխան նշանակում է ուրախ, հրապուրիչ դարձնել և հույզերով հագեցնել նրա մանկությունը:

Դ. Քլուսթերն առանձնացնում է քննադատական մտածողության հետևյալ տեսակները.

- Քննադատական մտածողությունը ինքնուրույն մտածողություն է:
- Տեղեկությունը քննադատական մտածողության ելակետ է, այլ ոչ վերջնակետ:
- Քննադատական մտածողությունը սկսվում է հարցադրմամբ և լուծվելիք խնդրի պարզաբանմամբ:
- Քննադատական մտածողությունը հիմնված է համոզիչ փաստարկների վրա և քննադատական մտածողությունը սոցիալական մտածողություն է:

7.Օգտագործված գրականության ցանկ

1. Ջինի Լ. Սթիլ, Քուրթիս Ս. Մերեդիթ, Չարլզ Թեմփլ, ձեռնարկ <<Քննադատական մտածողության համակարգ ամբողջ ուսումնական ծրագրի համատեքստում>> (ուղեցույց I, II. III, IV).
2. Մայրենի 2-4 ուսուցչի ձեռնարկ
3. <<Նախաշավիղ>> գիտամեթոդական հանդեսի հրատարակումների շարք
4. Mary Roche, Developing Children's Critical Thinking through Picturebooks
5. Dr. Linda Elder, Critical Thinking for Children, 2nd edition